# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱՐՋՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ
համայնք, Գ.ԱՐՋՈՒՏ, Հեռ. 093 19 91 34 ,
arjut.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

N ԳԱ54
*22 մարտ 2018թ.*

Կից Ձեզ ենք ներկայացնում Արջուտ համայնքի ղեկավարի 17-18 որոշումները:

22.03.2018

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

*Կատ. `*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնք

## Ո Ր Ո Շ Ու Մ

«21» 03 2018 թվականի N -17.Ա

### 06-019-0105-0151 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տիգրան Զոհրաբի Թորոսյանի դիմումը, Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 14032018-06-0041 վկայականը, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 912-Ն օրենքի քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի օրինականացման կարգով և նկատի ունենալով այն հանգամանքը, որ հողամասում կառուցված շենք, շինությունների սեփականության իրավունքի ճանաչումը և պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, և այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում , կառուցված չէ քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել Տիգրան Զոհրաբի Թորոսյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող 0.32574 հա հողամասի վրա 2018 թվականին ինքնակամ կառուցված 64.8 քմ պահեստը, 15.88 քմ պահակատունը, 65.82 քմ պարիսպը և վերոնշյալ օրինականացված կառույցների նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Տիգրան Զոհրաբի Թորոսյանի սեփականության իրավունքը:
2. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել 120900 ՀՀ դրամ :
3. Օրինականացման համար սահմանված վճարները 60- օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

Համայնքի ղեկավար՝ Վ Մկրտչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

22.03.2018թ. թիվ 18-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը`

Որոշում եմ`

ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքի 06-019-003-002 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին տրամադրել Արջուտ համայնք, 34 փողոց, թիվ 2 փոստային հասցեն:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Վ.ՄԿՐՏՉՅԱՆ